

Ավետիք Իսահակյան

Հեռո՞ւ ափերում միտքըս թափառեց

Հեռո՞ւ ափերում միտքըս թափառեց
Ազատ ու մենակ թևերը փըռած.
Ժպիտն աստղավառ, կրնճիռը մըռայլ,
Ժպիտն աստղավառ, կրնճիռը մռայլ,
Ինչպես ստվերներ մըտքիս հետ ընկած.
Հեռո՞ւ ափերում, ժայռերի կըրծքին
Շաչում էր, ծեծկում ծովը մթագին.
Եվ անդունդներից արշավում քամին
Հըպարտ ճակատիս:
Անտառը կաղնի խըշշում էր այնտեղ
Հին – հին դարերի, դալար ազգերի
Անցքերից շըքեղ:
Այնտեղ ցոլում էր երկինքը լազվարթ,
Եվ լազուրի մեջ՝ վըճիտ ու արվարթ՝
Հոգիս վառվում էր – բոցերի ծով էր …
Այնտեղ երգեցի խոհերըս անհուն,
Որ աստղերի պես շաղ էի տալիս
Հեռո՞ւ ափերում …
Եվ ստեղծեցի չըքնաղ մի աշխարհ,
Ու հզորն ու վեհ և գեղեցկություն
Իշխում են անմահ, վառվում են պայծառ.
- Այդպես երգեցի հեռո՞ւ ափերում
Թևերըս՝ արծակ,

Յատուկ Պոէմ

Ազա՞տ ու մենակ …

1896

Յատուկ Պոէմ